**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Օ Ր Ե Ն Ք Ը**

Ընդունված է 2017 թվականի
դեկտեմբերի 21-ին

# «ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Արտոնագրային վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2011 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-91-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.3-րդ մաս.

«3.3. Գործունեության յուրաքանչյուր տեսակի մասով սույն օրենքի անբաժանելի մաս համարվող N 1 և N 2 հավելվածներով սահմանված արտոնագրային վճարի չափը հաշվարկելիս շրջկենտրոններում և այլ վայրերում կիրառվում է 0,5 գործակից:»:

**Հոդված 2.** Օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասում «2018 թվականի հուլիսի 1-ը» բառերը փոխարինել «2021 թվականի հունվարի 1-ը» բառերով:

**Հոդված 3.** Օրենքի 10-րդ հոդվածում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունը՝ համաձայնեցնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հետ» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության հարկային մարմինը» բառերով:

**Հոդված 4.** Օրենքի N 2 հավելվածի 7-րդ տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 7. | Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկում և նորոգում, այդ թվում՝<br><br>մետաղադրամով շահագործվող ավտոմատների միջոցով ավտոմեքենաների լվացում | x<br><br>ավտոմատ | 45,0 | 35,0 | 25,0 |

»:

**Հոդված 5**. Օրենքի տեքստում, N 3 և N 4 հավելվածներում, բացառությամբ ««Կազմակերպությունների և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» և ««Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերի, «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

**Հոդված 6.** Օրենքի N 5 և N 6 հավելվածներում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության հարկային մարմին» բառերով:

**Հոդված 7.**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքի 1-ին հոդվածով սահմանված գործակիցը կիրառվում է 2018 թվականի (եռամսյակ, կիսամյակ, ինն ամիս, տարի) համար արտոնագրային վճարի չափը հաշվարկելիս:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՆԱԽԱԳԱՀ** **Բ. ՍԱՀԱԿՅԱՆ**

2017թ. դեկտեմբերի 27
Ստեփանակերտ
ՀՕ-61-Ն